



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3341

Oppelt

Դասի համար կամաց կազմություն
պահ

28(075)
0-84

27ի գիշեր

1875

2010

2001

28(075)
0-84

46a

ՀԱԽԱԾԱԿԻՉ

ԱՐՕՆԱՎԻՎՏՎԱՔԻՑԻԱՆ

12072

Մասն առաջին
1/11

ԵՍԽԵԳԻՑԵԼԵՔ

Քրիստոնէական հաւատոյ

ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԵՅ ՅԱԳՈՒՅ; Փ. Պ. Պ.

ՕՐԵԼԻ

ԵՐԿՐՈՐԴ տպագրութեան



ՏՓԽԵՍ

280
067-0P

1875

280
1067-00

28(075)
0-84 ա.

4624

(48)

ՆԱԽԱԶԱՒԴ

1201 չ

Ա Բ Օ Ա Ա Գ Ք Տ Տ Ա Բ Ք Բ Կ Ա Ա

Բ Ա Տ

Ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ
Մասն առաջին

ՆԵԽԵԳԻՏԵԼԻՔ

Քրիստոնէական հաւատոյ

ԵՐԵՎԱՆԻ ՅՈՒՆԻՑԻ ՅՈՎՈՒՅԻ Ե. Ք. ՕՐԲԵԼԻ

ՏՊԵԳԻ ԵՎ

Հրամանաւ Ա Եհափառ Հայրապետին մե-
րոյ Տեառն Գեղրգայ Դ.

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի



Տ ՏՊԵՐԵՄ Ե. Ա. ԶԵՐԵՑԻ

1875

Дозволено Цензурою. Тифлисъ. 20-го Сентября 1875 года.

180
90-7801

5105

ՆԱՐԻԿԱ ԳԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Տ Ա Վ Ե Կ Ե Ր Ո Ր

Առաջնորդի Հայոց Վրաստանի և Խմերեթի

Ս Բ Ե Ր Ե Մ Ե Կ Ե Ր Ե Յ

Ա Բ Բ Ե Վ Ե Կ Ա Պ Ո Ս Ւ

Յ Ա Լ Ե Ք

Ե յիշատակ հոգւոց հանդուցեալ ծնողաց իւրոց Ապրակի և
Շուշանայ տէր Պետրոսեանց:

Յ Ա Լ Ե Կ Ա Վ Ե Ր Ո Ջ Ա

ՆԱԽԱՅԱՒՅ

Ա Ք Օ Ա Ա Պ Վ Ս Ա Բ Ք Բ Կ Ա Ա

Կ Ե Մ

Ն Ե Խ Ե Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Ք Ր Ե Խ Ս Ո Ւ Կ Ե Կ Ե Ն Հ Ե Խ Ս Ո Յ

Է. Ի՞նչ է կրօնն:

Չ. Կրօնն է ճանաչել, սիրել և պաշտել Աստուած:

Է. Ի՞նչ է սովորեցնում մարդոյս կրօնը:

Չ. Կրօնը մարդոյս սովորեցնում է միջոցները, որով նա կարող լինի մօտենալ Աստուածոյ և միանալ նորա հետ:

Է. Ճարկաւոր է մարդոյս կրօնը թէ ոչ:

Չ. Ենշուշտ, պատճառ որ՝ կայ Աստուած երկնի և երկրի Արարիչ և Տէր, և առանց Աստուածոյ մարդոյ կարող չէ երջանիկ լինել:

Է. Ի՞նչ է կրօնի առարկայն:

Չ. Կրօնի առարկայն Աստուած է, և Աստուածոյ վերաբերեալ ճշմարտութիւնքը:

«Օտանօյն. Կրօն բառը նշանակումէ իրեւն, ունեւն ողակե-
նիւս բառեց իտուած, եւր լեռ իւր սրբի մէշ ունի իւրամէն է
ու իւրամէն իւր գոփած Աստուած որսնեցու, նորան Տօռենացու,
ի ողուշուն իւր միաւորւթւուն նորա հետո:

- Հ. Ո՞ր տեղ են պարունակում Աստուածային ճշմարտութիւնքը:
- Պ. Աստուածաշունչ գրոց, այսինքն հին և նոր կտակարանի մէջ:
- Հ. Ի՞նչ պատճառաւ սուրբ գիրքը Աստուածաշունչ կոչւցաւ:
- Պ. Այս պատճառաւ որ Աստուածային աղդեցութեամբ և ազւոյն սրբոյ շնչմամբ գրուեցաւ:
- Հ. Ո՞յք գրեցին Աստուածաշունչ գիրքը, կամ հին և նոր կտակարանը:
- Պ. Հին կտակարանը գրեցին մարդարէք, իոկ նորը առաքեալք:
- Հ. Ո՞ր ուսումն է ամենից աւելի հարկաւոր մարդոյ:
- Պ. Ուսումն քրիստոնէական կրօնի և ուղեղ հաւատոյ:
- Հ. Ի՞նչ պատճառաւ:
- Պ. Այս պատճառաւ որ իբրև մարդ և քրիստոնեայ պարտիմ պարզ ճանաչել զԱստուած, հաւատալ և պաշտել նորան, և անսխալ դաւանել այն եկեղեցւոյ խորհուրդները, որոյ մէջ ծնել և գաստիարակում եմ:
- Հ. Ի՞նչ պատճառաւ պարտիս ճանաչել Աստուած:
- Պ. Այս պատճառաւ որ՝ ինչպէս իմ ժամանակաւոր երջանկութիւնը, նմանապէս և իմ հոգւոյ փրկութիւնը կախած է յԱստուածոյ, և առանց Աստուածոյ՝ մարդ կարող չէ երջանիկ լինել ոչ այս և ոչ հանգերձեալ կենաց մէջ:
- Հ. Ո՞ր եկեղեցւոյ մէջ ես ծնել:
- Պ. Ես ծնել եմ Հայոց առաքելական եկեղեցւոյ մէջ, որ թագէոս և Տարթուղիմէոս առաքելոց ձեռքով հիմնուեցաւ Հայաստանում:
- Հ. Հաւատով ի՞նչ ես կոչում:
- Պ. Հաւատով կոչում եմ Քրիստոնէայ, այսինքն Քրիստո-

- սեան, Քրիստոսի աշակերտ, հետեւող և դաւանող Քրիստոսի:
- Հ. Քրիստոնէական հաւատոյ հիմն և ուսուցիչը ով է:
- Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:
- Հ. Երբ սովորեցրեց Տէրն մեր Քրիստոս իւր վարդապետութիւնը:
- Պ. Եաւս ինքն՝ երբ այս աշխարհիս վերայ էր, և ազա իւր յարութիւնից յետոյ առաքելոց ձեռքով:
- Հ. Առաքեալք ի՞նչպէս տարածեցին Քրիստոսի վարդապետութիւնը:
- Պ. Երբեմն գրով և երբեմն խօսքով:
- Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ Քրիստոնէական վարդապետութիւնը:
- Պ. Օաստուած Ճանաչել, հաւատալ ի նա, յուսալ, սիրել և ամենայն զօրութեամբ պաշտել զնա:
- Հ Ա Ւ Ա Տ.
- Հ. Ի՞նչ է հաւատը:
- Պ. Հաւատն է պարզ Ճանաչել, հաւանել և ընդունել այն ամէն ճշմարտութիւնքը, որ յայսնել է մեզ Աստուած:
- Հ. Ճշմարիտ հաւատը որպիսի նշաններ կամ յատկութիւնք պիտի ունենայ:
- Պ. Հաւատը պէտք է լինի հաստատուն՝ որ յաղթէ աշխարհի ամէն փորձութեանց, գործունեայ կամ կենդանի՝ որ իւր հետ պիտի ունենայ և բարի գործք, պատճառ որ՝ Հաւատով առանց բարի գործոց մեռեալ է առանձինն:
- Հ. Հաւատոյ գլխաւոր մասունքները ի՞նչ տեղ են պարունակում համառօտիւ:
- Պ. Հանգանակի, այսինքն Հաւատամքի մէջ:

- Հ. Երբ և մւր գրւեցաւ շանդանակը:
- Պ. Կիկիա քաղաքում, ուր 325 թուին ժողովեցան երեք հարիւր տասնեռութ շայրապետք, և հերքելով Արիսոնի մոլորութիւնը՝ հաստատեցին քրիստոնէական հաւատոյ ուղղափառութիւնը:
- Հ. Քանի՞ հաւատալի մասունք կան շանդանակի մէջ:
- Պ. Տասներկու:
- Հ. Ո՞րն է առաջին մասը շանդանակի:
- Պ. “Շաւատամք՝ ի մի Աստուած շայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներեռութից”:
- Հ. Ի՞նչ է սովորեցնում մեղ առաջին մասը շաւատամքի:
- Պ. Շաւատամքի առաջին մասը սովորեցնում է մեզ նախ՝ թէ կայ Աստուած, և մի է: Երկրորդ՝ թէ Աստուած մի է, բայց ունի երեք անձն (շայր, Որդի և ողի սուրբ), այսինքն մի Աստուածութեան մէջ երեք անձն, և երեք անձանց մէջ մի Աստուածութիւն, մի բառով՝ Երրորդութիւն: Երրորդ՝ թէ առաջին անձն սուրբ Երրորդութեան է շայրն Աստուած: Չորրորդ՝ թէ այս երեք սրբեանն Աստուած ստեղծել է երկինքը և երկիրը, և նորանց միջի երևելի և աներեցիթ արարածքը:
- Շինդերորդ՝ թէ Աստուած այս ամեն արարածքը իւր ձեռին ունի, պահպանում է և կառավարում:
- Հ. Ո՞րն է երկրորդ մասը շանդանակի:
- Պ. “(Շաւատամք) և ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուածոյ ծնեալն յԱստուածոյ աօրէ միածին, այսինքն յէութենէ աօր, Աստուած յԱստուածոյ, ըստ ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուածոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած: Կոյն ինքն ՚ի բնութենէ աօր, որով ամենայն ինչ եղէ յերկինս և ՚ի վերայ երկրի՝ երևելիք և աներեցիթք”:

- Հ. Ի՞նչ ենք սովորում այս մասից:
- Պ. Սովորում ենք առաջինը՝ թէ երկրորդ անձն սուրբ Երրորդութեան է Որդին Աստուածոյ Յիսուս Քրիստոս: Երկրորդ՝ թէ մի միայն է Որդին Աստուածոյ, և չկայ ուրիշ մէկը նորա նման Որդի Աստուածոյ: Երրորդ՝ թէ Որդին Աստուածոյ անժամանակապէս ծնեալ է աօր Աստուածոյ էութիւնից, և այն պտտճառաւ նա անսկիզբն է և անլանձան, ինչպէս որ շայրն Աստուած: Չորրորդ՝ թէ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած է, ՚ի ճշմարտէն Աստուածոյ ծնած, և համագոյակից է աօր Աստուածոյ: Շինդերորդ՝ թէ Որդին Աստուածոյ չէ ստեղծւած, այլ նա է ստեղծել ամէնը:
- Հ. Ո՞րն է երրորդ մասը շանդանակի:
- Պ. “Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն աօգւովն սրբով: Որով էառ մարմին, հոգի և միտ և զամենայն որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք”:
- Հ. Ի՞նչ է սովորեցնում մեղ շաւատամքի այս մասը:
- Պ. Սովորեցնում է մեզ, առաջինը՝ թէ Որդին Աստուածոյ յերկնից իջաւ և մարդկային բնութիւնը առաւ, այսինքն մարմին, հոգի և միտք, և եղաւ կատարեալ մարդ և կատարեալ Աստուած, որով և յայտնուելով աշխարհիս վերայ, կոչեցաւ Յիսուս Քրիստոս, Մեսիա, և Կամանուէլ: Երկրորդ՝ թէ Յիսուս Քրիստոս ծնաւ Մարիամ սուրբ կուսից աօգւով սրբով՝ ճշմարտապէս, և ոչ կարծեօք: Երրորդ՝ թէ Յիսուս Քրիստոս եկաւ աշխարհք որ փրկէ մարդկանց այն մեղից՝ որոյ մէջ ծնեալ են նորանք և կան, և պատէ այն մահից՝ որով

գատապարտուած էր ամէն մարդ մեր նախահօր Աղամայ
մեղքով:

• Ո՞րն է Հաւատամբի չորրորդ մասը:

Պ. “Զարչարեալ, Խաչեալ, Թաղեալ”:

• Ի՞նչ է սովորեցնում մեղ այս մասը:

Պ. Այս մասը սովորեցնում է մեզ, առաջինը՝ թէ Յիսուս Քրիստոս շատ չարչարանք քաշելով՝ Խաչուեցաւ, մեռաւ և թաղեցաւ: Երկրորդ՝ թէ այս չարչարանքը քաշեց ոչ թէ իւր մեղաց համար, պատճառ որ ինքն անմեղ էր և անարատ, այլ չարչարուեցաւ և մեռաւ՝ մեղ փրկելու համար մեղքից և մահից:

• Ո՞րն է հինգերորդ մասը:

Պ. “Յերրորդ աւուր յարուցեալ”:

• Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ:

Պ. Այս մասի մէջ սովորում ենք՝ թէ Յիսուս Քրիստոս մարդկային բնութեամբ մեռնելուց յետոյ՝ երրորդ օրը յարութիւն առաւ:

• Ո՞րն է Հաւատամբի վեցերորդ մասը:

Պ. “Ելեալ յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ ծօր”:

• Ի՞նչ է սովորեցնում մեղ այս մասը:

Պ. Այս մասը սովորեցնում է մեզ՝ թէ Յիսուս Քրիստոս իւր յարութիւնից յետոյ՝ քառասներորդ օրը համբարձաւ երկնքը նոյն մարմնով, և նստաւ ծօր Աստուծոյ աջ կողմը, հաւասար լինելով նորա հետ զօրութեամբ և փառօք:

• Ո՞րն է Հաւատամբի եօթներորդ մասը:

Պ. “Գալոց է նովին մարմնով և փառօք ծօր ՚ի դատել զիենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ դյ վախճան”:

• Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ:

Պ. Այս մասի մէջ սովորում ենք՝ թէ Յիսուս Քրիստոս միւսանգամ պէտք է գայ երկնքից իւր Աստուծածային զօրութեամբ և փառօք՝ բոլոր մարդկանց դատելու համար՝ թէ կենդանեաց և թէ մեռելոց, և նորա թագաւորութիւնը վախճան չունի:

• Ո՞րն է Հաւատամբի ութերորդ մասը:

Պ. “Հաւատամբ և ՚ի սուրբ Հոգին՝ յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն ՚ի Յորդանան, քարողեաց զտոաքեալն, և բնակեցաւ ՚ի սուրբսն”:

• Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ:

Պ. Այս մասի մէջ սովորում ենք առաջինը՝ թէ Երրորդ անձն սուրբ Երրորդութեան է Հոգին սուրբ: Երկրորդ թէ Հոգին սուրբ հաւասարակից է Հօր և Որդւոյ, և մենք պարտական ենք Հօր և Որդւոյ հետ հաւասար փառօք և երկրպագութիւն տալ Հոգւոյն սրբոյ իրեն Ճշմարիտ Աստուծոյ: Երրորդ՝ թէ մարգարէք և առաքեալք Աստուծոյ կամքը մարդկանց յայտնելու և սուրբ գիրքը գրելու ժամանակ՝ Հոգւոյն սրբոյ շնչմամբ էին խօսում և գրում: Չորրորդ՝ թէ երբ Քրիստոս մկրտւում էր Յորդանան գետի մէջ, Հոգին սուրբ իջաւ նորա վերայ աղլաւնակերպ, և քարողեց թէ Քրիստոս ուղարկուած է ի Հօրէ: Հինգերորդ՝ թէ Հոգին սուրբ բնակեցաւ սուրբերի մէջ:

• Ի՞նչ ես հասկանում Հաւատամբի մէջ ասելով, “Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս”:

Պ. Օրէնք, Ամարգարէք և Աւետարան ասելով հասկանում եմ Աստուծաշունչ գիրքը, այսինքն ՚ին և նոր Ատակարանը:

- Հ. Եսդ Խօսքերով ի՞նչ է սովորեցնում Եկեղեցին:
- Պ. Առվորեցնում է մեղ հաւատալ՝ թէ մարդարէք և առաքեալք ի՞նչ որ Խօսեցան և գրեցին, ոգուով սրբով Խօսեցան և գրեցին, կամ թէ ոգին սուրբն էր նոցառուցիչը:
- Հ. Ի՞նչի համար ոգին սուրբ աղաւնակերպ իջաւ Քրիստոսի վերայ:
- Պ. Երրա անմեղութիւնը ցոյց տալու և Կատուածութիւնը յայտնելու համար, և վկայելու թէ՝ նա է աշխարհիս Ճշմարիտ Փրկիչը:
- Հ. Ո՞րն է աւատամքի իններորդ մասը:
- Պ. “ աւատամք և ’ի մի միայն ընդհանրական և առաքելական Եկեղեցին”:
- Հ. Ի՞նչ է սովորեցնում մեղ աւատամքի այս մասը:
- Պ. աւատամքի այս մասը սովորեցնում է մեղ, թէ Ճշմարիտ Եկեղեցին Քրիստոսի Այի է, Սուրբ է, Ընդհանրական է և Վռաքելական:
- Հ. Ի՞նչ պատճառաւ Եկեղեցին Քրիստոսի կոչում Այի:
- Պ. Եւյն պատճառաւ որ ամենայն քրիստոնեայք միուն հաւատով, յուսով և սիրով կապուած են մի Գլխոյ՝ այսինքն Քրիստոսի հետ:
- Հ. Ի՞նչ պատճառաւ կոչում է Առեր:
- Պ. Եւյն պատճառաւ որ քրիստոնէական հաւատոյ ուսմունքը սուրբ է և անարատ, և թէ ամենայն քրիստոնեայք մկրտութեամբ սուրբ աւազանին սրբուած են սկզբնական մեղքից:
- Հ. Ի՞նչ պատճառաւ կոչում է Շնորհանդական:
- Պ. Եւյն պատճառաւ որ Քրիստոսի Եկեղեցին ո՞ր ազգից և լինի անխտիր ամենին ընդունում է իւր ծոցը, և տարածուած է աշխարհիս ամեն կողմը, և անսասան պիտի

- մայ և շարունակուի մինչև աշխարհիս վերջը:
- Հ. Ի՞նչ պատճառաւ կոչում է Առաքելական:
- Պ. Եւյն պատճառաւ որ Քրիստոսի Եկեղեցին հաստառուած է առաքելական քարոզութեան հիման վերայ:
- Հ. Ո՞րն է աւատամքի տասներորդ մասը:
- Պ. (Աւատամք) ’ի մի Ակրտութիւն, յԱպաշխարութիւն ’ի քաւութիւն և ’ի թողութիւն մեղաց»:
- Հ. Ի՞նչ է սովորեցնում մեղ աւատամքի այս մասը:
- Պ. Եւյն մասը սովորեցնում է մեզ, առաջինը՝ Ակրտութեան խորհուրդը, այսինքն թէ աւազանին ծննդեամբ սրբուում է մարդու սկզբնական մեղքից: Երկրորդ՝ թէ մարդու Ճշմարիտ ապաշխարութեամբ ազատուում է և թողութիւն է ստանում այն մեղքերից՝ որ մկրտութիւնից յետոյ է գործել:
- Հ. Քանի՞ են Խորհուրդը Եկեղեցւոյ:
- Պ. Եօթն. Ակրտութիւն, Դրոշմ, յԱպաշխարութիւն, աղորդութիւն, Ամուսնութիւն, կարգ, և հիւանդաց Օծումն:
- Հ. Ի՞նչ է Ակրտութիւնը:
- Պ. Ակրտութիւնն է խորհուրդ Եկեղեցւոյ, որ նշանակում է ջրով լուացումն յանուն ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդոյ և ոգուոյն սրբոյ, որով սրբուում է մարդու սկզբնական մեղքից, և որդեգիր է լինում երկնաւոր Հօր:
- Հ. Ի՞նչպէս է կատարուում Ակրտութեան խորհուրդը:
- Պ. Երեք անգամ երեւայն ընկղմելով աւազանի միջ յանուն Հօր և Որդոյ և ոգուոյն սրբոյ, յօրինակ մահուան և երեքօրեայ թաղման Քրիստոսի գերեզմանի մէջ:
- Հ. Ի՞նչ է Գրոշմը:
- Պ. Դրոշմը Եկեղեցւոյ խորհուրդ է, որ աղօթքով, և մե-

- ոռնով օծելով մկրտուածի զգայարանքը՝ ընդունում է
Հոգւոյն սրբոյ շնորհքը, որով զօրանում է և հաստա-
տում քրիստոնեական հաւատոյ և պատուիրանապահու-
թեան մէջ, և Քրիստոսի ղինուոր գրուելով կոչումէ
Քրիստոնեայ:
- Հ. Ի՞նչ է Ապաշխարութիւնն:
- Պ. Ապաշխարութիւնն է Եկեղեցւոյ Խորհուրդ, որով զզա-
ցած քրիստոնեայն Խոստովանուում է Աստուծոյ քահա-
նայի առաջ իւր մեղքերը, և նորա միջնորդութեամբ
ընդունում է յլստուծոյ թողութիւն, և սրբուում է այն
մեղքից՝ որ մկրտութիւնից յետոյ է գործել:
- Հ. Ի՞նչ է Հաղորդութիւնը:
- Պ. Հաղորդութիւնն է Եկեղեցւոյ Խորհուրդ, որ հացի տե-
սակաւ ճաշակում ենք Քրիստոսի մարմինը, և գինոյ
տեսակաւ ընդունում ենք նորա արիւնը, որով սրբուում
ենք մեղքից, և միանում ենք Քրիստոսի հետ հոգւով:
- Հ. Ի՞նչով է կատարուում մեեղանում այդ Խորհուրդը:
- Պ. Տաղարջ հացով և անջրախառն գինով:
- Հ. Ի՞նչ հաւատալի բան կայ այս Խորհրդոյ մէջ:
- Պ. Այս է հաւատալին, որ այն հացը որ ընդունում ենք՝ է
իսկապէս Քրիստոսի մարմին, և գինին իսկապէս Քրիս-
տոսի արիւն:
- Հ. Ի՞նչ է Ամուսնութիւնն:
- Պ. Ամուսնութիւնն է Եկեղեցւոյ Խորհուրդ, որով մարդու
կին հաւատացեալ միմեանց հաւանութեամբ և քահա-
նայի օրհնութեամբ միաւորւում են, յօրինակ միաւորու-
թեան Քրիստոսի Եկեղեցւոյ հետ, զաւակ ծնանելու
համար և սնուցանելու Քրիստոնեական հաւատոյ և
Աստուծոյ պատուիրանապահութեան մէջ:
- Հ. Ի՞նչ է Կարգն:

- Պ. Ե Խորհուրդ Եկեղեցւոյ, որով եպիսկոպոսը ձեռը դնե-
լով նուիրելով վերայ, աղօթքով, և սուրբ մեռնով
օծելով նորա Ճակատը և ձեռքը, տալիս է հոգեսոր պաշ-
տոն հոլուելու ժողովուրդը, և կատարելու Եկեղեցւոյ
սուրբ Խորհուրդները:
- Հ. Կարգը քանի աստիճան ունի:
- Պ. Եօթն, Դռնապանութիւն, Շնթերցութիւն, Երգմե-
ցուցութիւն, Գահընկալութիւն, Կիսասարկաւագու-
թիւն, Աարկաւագութիւն և Քահանայութիւն:
- Հ. Ի՞նչ է Հիւանդաց (Օծումն:
- Պ. Ե Եկեղեցւոյ Խորհուրդ, որ քահանայն ձեռը դնելով
Հիւանդի վերայ և իւղով օծելով նորան՝ աղօթք է ա-
նում առ Աստուծած. որով Հիւանդը ընդունում է յլս-
տուծոյ մարմնոյ առողջութիւն և ներելի մեղաց թո-
ղութիւն:
- Հ. Առաքելք ի՞նչպէս էին կատարում այդ Խորհուրդը:
- Պ. Երրեմն միայն ձեռը դնելով Հիւանդի վերայ և տղօթե-
լով, և երրեմն ևս իւղով օծելով յանուն Յիսուսի:
- Հ. Առանց իւղոյ ևս կարելի է կատարել այդ Խորհուրդը:
- Պ. Այս կարելի է, ինչպէս կատարում է Հայոց Եկեղեցին
միայն քահանայի աղօթքով:
- Ո՞րն է Հաւատամքի մետասաներորդ մասը:
- Պ. “(Հաւատամք)՝ ՚ի Յարութիւն մեռելոց, ՚ի Դատա-
տանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն
երկնից”:
- Հ. Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ:
- Պ. Այս մասի մէջ սովորում ենք՝ թէ ամեն մեռած մար-
դոց մարմինները վերջին դատաստանի օրը իւրեանց
հոգւոց հետ պիտի միանան և վերկենան Աստուծոյ

Հրամանաւ, և դատուին Քրիստոսից, և ամէնքը իւրեանց վարձը ստանան:

Դ. Ո՞րն է երկոտասաներորդ մասը Հաւատամքի:

Պ. “Եւ ՚ի Կեանսն յաւիտենականս”:

Տ. Ի՞նչ է սովորեցնում այս մասը:

Պ. Հաւատամքի այս մասը սովորեցնում է մեղ, թէ ամէն մարդկանց յարութիւնից և Քրիստոսի գատաստանից յետոյ՝ յաւիտենական կեանք պիտի լինի, ուր արդարները անվանման երանութիւնը կը ժառանգեն, և անզեղջ մեղաւորները յաւիտենական տանջանքը:

Ա. Պ. Օ թ. Ք.

Աղօթքն է խնդրուածք բարեաց Ճշտուծոյ:

Աղօթքը բաժանւում է երկու՝ հրապարակական և առանձնական:

Հրապարակականն է, երբ որ շատ աղօթք սնողների հետ միասին տաճարի մէջ հրապարակաւ կատարում ենք:

Առանձնականն է որ մէսակ ենք կատարում:

Աղօթքների մէջ զլխաւորը Հայր մերն է, որ Քրիստոս Տէրն մեր սովորեցրուց:

Այս աղօթքի մէջ պարունակում են եօթը ենդրուածք: Ա. “Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո,»:

Այս ասելով ենդրում ենք մեր երկնաւոր Հօրից, որ արժանացնի մեզ սուրբ առնել, այսինքն փառաւորել նորասուրբ անունը, որդիաբար ծառայելով նորան:

Բ. “Եկեացէ արքայութիւն քո,»:

Որ նա ինքը շնորհօք թագաւորէ մեր սրտի մէջ, և մենք չծառայենք մեղքին և սատանային:

Գ. “Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի,»:

Որ մենք նորա կամքը կատարենք այս աշխարհումն այնպէս, ինչպէս երկնքումը կատարում են հրեշտակները:

Դ. “Օհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր,»:

Մեր ամէն օրուայ ապրուստը այսօր էլ տուր մեզ:

Ե. “Թառղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց,»:

Վերիր մեզ մեղքերը այնպէս, ինչպէս որ մենք էլ ներում ենք մեր մեղանչողներին:

Զ. “Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն,»:

Մի գձիր մեզ փորձանքի մէջ:

Է. “Այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ,»:

Վզատիր մեզ ամէն չար եւ մեղանչական գործքերից եւ սատանայի ձեռքից:

Օի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէս,»:

ՏԵՍԱԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՎԱՐ

Եռաջին Այլամբ Տէր Աստուած քո, մի
ունիցիս քեզ զայլ Աստուած բաց յինէն,,:

Աստուած այս առաջին պատուիրանքով հրամայում է
մեզ, 1. որ ճանաչենք նորան, հաւատանք եւ անկեղծ սիրով
սիրենք: 2. փառաբանենք նորան, երկրպագութիւն տանք եւ
ամենայն զօրութեամբ պաշտենք: Եւ 3. բաց ՚ի նորանից էլ
ուրիշ Աստուած չունենք:

Երկրորդ, “Մի արասցես դու քեզ կուռս
բատ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս
՚ի վեր, և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ,,:

Այս պատուիրանքով արգելում է մեզ Աստուած, որ
կոոց երկրպագութիւն չտանք եւ կուռք չպաշտենք: Կուռք
նշանակում է քարից, փայտից, ոսկուց կամ ուրիշ նիւթից
շինած պատկեր, որին երկրպագութիւն են տալիս կոապաշտ-
ները՝ ձշմարիտ Աստուծոյ տեղ:

Երրորդ, “Մի առնուցուս զանուն Աստու-
ծոյ քո ՚ի վերայ մնութեաց,,:

Առանով պատուիրում է մեզ Աստուած, որ իւր անունը
ունայն բաների վերայ չը յիշենք եւ սուտ երգում չ'ուտենք:

Չորրորդ, “Յիշեա՛ սրբել զօր շաբաթուն,
այսինքն զկիւրակես,,:

Այս պատուիրանքով հրամայում է մեզ Աստուած որ
վեց օր մեր մարմաւոր գործքերը կատարենք, իսկ եօթնե-
րորդ օրը Աստուծոյ բնծայենք, այսինքն սուրբ պահենք այն
օրը, աղօթքով եւ Աստուածպաշտութեամբ պարապելով եւ

Աստուտծահաճոյ գործքեր կատարելով, պատճառ որ վեց
օրումը ստեղծեց Աստուած այս աշխարհս, եւ եօթներորդ
օրը դադարեցաւ գործից:

Ըստ բառականութեան մաս է եւ հայերէն նշանակում
է հանգիստ: Քրիստոսից առաջ Աստուած հրամայեց վրէից
սուրբ պահել այս օրը: Առաքեալք ՚ի պատիւ Քրիստոսի
յարութեան՝ շաբաթ օրուայ կիւրակի օր փոխեցին: Կիւրակի
նշանակում է Տէրունի՝ այսինքն Տէրոջ կամ Աստուծոյ օր:

Անգերորդ, “Պատուեա՛ զհայր քո և զմայր
քո, զի բարի լինիցի քեզ, և երկայնակեաց
լիցիս ՚ի վերայ երկրի,,:

Սորանով հրամայում է պատուել մեր ծնողացը եւ հնա-
զանդ լինել նոցա: Նմանապէս պատուել թագաւորին, մեր հո-
գեւոր ծնողացը, բարերարներին, ծերերին, մեծաւորներին,
եւ այլն:

Անգերորդ, “Մի սպանաներ,,:

Այս պատուիրանքը արգելում է մեզ՝ մեր կամքով մեր
կամ ուրիշի մոհուան պատճառ գառնալը, մինչև անգամ լեզ-
ուով ով և իցէ վերաւորելը կամ ցաւեցնելը:

Եօթներորդ, “Մի շնարի,,:

Այս պատուիրանքով հրամայում է մեզ Աստուած ամեն-
պեղծ գործքերից, շնութիւնից և ամեն անկարդ մարմական
ցանկութիւններից հեռու կենալ:

Եսթերորդ, “Մի գողանարի,,:

Առանով արգելում է մեզ ուրիշի ապրանքը ուժով կամ
նորամանկութեամբ սեփհականել կամ խլել:

Իններորդ, “Ո՞ի սուտ վկայեր զընկերէ քումմէ”:

Այս պատուիրանքով հրամայում է մեղ Աստուած սուտ չեսուիլ և սուտ վկայութիւն չ'տալ և խաբեբայութիւն չանել:

Տասներորդ, “Ո՞ի ցանկանար տան ընկերի քո և մի՛ ամենայնի որ նորա իցեն”:

Սորանով արգելում է մեղ Աստուած, որ մեր ընկերոջ ունեցած բաներին աչք չդնենք և չցանկանանք, և ոչ ոքի չամար չար բան մաքներիցս չանցկացնենք:

Այս տասը պատուիրանքը բովանդակում է իւր մեջ երկու գլխաւոր պարտաւորութիւն, այս է՝ Աստուած սիրելը ի վեր քան զամենայն ինչ, և ընկերը սիրել իրեւ իւր անձն:

Մ Ե Պ Տ

Մեղքն է պատուիրանազանցութիւն ընդդէմ Աստուածոյ հրամանին:

Մեղքը բաժանում է երկու. Ակզենական և ‘Աերգործական’:

Ակզենականն է առաջին մարդոյ Աղամայ մեղքը, իսկ ‘Աերգործական’ որ մենք մեղքն գործում ենք մեր կեանքի մեջ:

‘Աերգործական մեղքը բաժանում է երկու. Մահուչափ և թեթեւ:

Մահուչափ մեղքերն են այսոքիկ եօթն. Ապարտութիւն, ‘Ախսանձ, Տարկութիւն, ’Օսուլութիւն, Աղահութիւն, Որկրամոլութիւն, Բղջախոհութիւն:

Մահուչափ մեղաց դիմադրեալ առաքինութիւնքն են,

Ապարտութեան դէմ՝ Խոնարհութիւն, ‘Ախսանձու դէմ՝ Եղբայրսիրութիւն, Տարկութեան դէմ՝ Նեղութիւն, ’Օսուլութեան դէմ՝ Արիութիւն, Աղահութեան դէմ՝ Ողորմածութիւն, Որկրամոլութեան դէմ՝ Ճռուժկալութիւն, Բղջախոհութեան դէմ՝ Ողջախոհութիւն:

Թեթեւ կոչւում է այն մշղը՝ որ մարդ անդիտութեամբ, տկարութեամբ կամ ակամայ է գործում:



Հայաստանեայց Եկեղեցոյ ժամանեալութեամբ Ապենա, Խճնիւն Ապենա Վաղարշական Եկեղեցու համար կարմատաք ուղղվելուն:

Եկեղեցին Վրիուսոսի օրը եօթն անգամ աղօթք ունի սահմանած. ինչպէս Դաւիթ մարգարէն ասում է՝ “Եւն անգամ յաւուր օրհնեցեց ուսեւ”, Ապղ. Ճժը. 164:

Ապարդին՝ Գիշերային ժամերգութիւնը, որ սկսում է Տէր ու բաղադրից, և աւարտում է մինչեւ ՚ի ՚Լայտ առաջարկութեան”:

Գիշերային ժամու խորհուրդն այս է, որ Վրիսոսոս ՚ի մեջ գիշերի ծնաւ՝ մեղ փրկելու. և ՚ի մեջ գիշերի յարեաւ մեղ յարութիւն տալու. և ՚ի մեջ գիշերի պիտի գայ դատաստան անելու. ինչպէս սուրբ Վւետարանը ասում է. “՚Ի ՚Է՛ Գիշերին ՚Ի ՚Է՛ ՚Էտպէտա՛ ահա ՚իշեայ ՚իշայ, ՚աղի՛ս ՚ըն՛ առաջ ՚նորուն”, Ապաթ. իէ. 6:

Ապա Վրիսատոնէից պէտք է, որ այս գիշերային ժամերգութեան ժամանակը՝ իմաստուն կուսանաց պէս արթուն լինին, հոգւոյ լապտերը վառ պահեն, որ յիմար կուսանաց պէս արքայութիւնից դուրս չմնան:

Երրորդ՝ Աստուածեան ժամերգութիւնն, որ սկսում է.

“Եղանակաւում ողբը լուսված է առվ. և կատարւում է՝ մինչև “Եղանակաւում օդհնելաւ”։ Այս ժամերգութեան մեջ պարունակում է այն խորհուրդը, որ առաւուտեան ժամեն սկիզբն արաւ Աստուած այս աշխարհիս ստեղծմանը, ինչպէս ասում է Աստուածաշունչ գիրքը թէ՝ “Եւ եղեւ երեխա ի-եղեւ վաղորդոյն՝ օք մեռ. Օմնդ. ա. 5։ Եւ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս առաւուտեան ժամուն միշտ գնում էր տաճարը. “Եւ ամենայն ժողովուրդն իտուիկը ընդ առաւագուստ առ ՚ի առանց լուել ՚ի նմանէ”։ Պուկ, իս. 38։

 Ամանապէս և զատկի օրը առաւուտեան ժամուն երեցաւ իւղաբեր կանանց։

Եղրորդ՝ Արեագալի ժամերգութիւնն, որ սկսւում է՝ “Եղանակաւում օդհնելաւ”։ և առարտում է մինչև Ճամշունաւում։ Այս ժամուն պիտի իմանանք, թէ ինչպէս զգալի արեգալը իւր ճառագայթը այս աշխարհիս վերայ ծագում է, նմանապէս իմանալի Արեգակը, այսինքն Քրիստոս, իւր շնորհաց լոյսը մեր սրտի մեջ կը ծագի։

Չորրորդ՝ Ճամշուն որ է Երեւան ողբը լոյսը մեայն է երրորդ ժամուն աղօթքը, պատճառ որ մեր նախամայրն Եւա յերրորդ ժամուն խարուեցաւ, և Աստուածոյ շնորհքից զրկեցաւ, և Հոգին սուրբ երրորդ ժամուն իջաւ վերնատանը սուրբ առաքելոց վերայ, և այն կորցրած շնորհքը վերստին տւաւ։ Երկրորդ ողբմեայն է վեցերորդ ժամուն աղօթքը պատճառ որ այս վեցերորդ ժամուն մեր Ամանահայրը մեղանչեց, և ՚ի նոյն ժամուն Քրիստոս Տէրն մեր խաչի վերայ բեւեռեցաւ։ Երրորդ ողբմեայն է իններորդ ժամուն աղօթքը, պատճառ որ այս իններորդ ժամուն Քրիստոս խաչի վերայ քացախ և լեղի խմեց, և աջակողմեան աւազակին գրախտը տարաւ իւր հետ, և այն ժամուն իւր ամենասուրբ բանական Հոգին Հօր Աստուածոյ ձեռքը աւանդեց։

Հինգերորդ՝ Երեկոյեան ժամերգութիւնն, որ սկսւում է՝ “Խորարհեց” Տէր Հոգին էուց, և առարտում է մինչև “Տէր Աստուած փրկութեան իմոյ ՚ի առակ իսպրտացն”, և նշանակում է, որ Քրիստոսի մարմինը այս ժամուն խաչից ցած բերին։

Վեցերորդ՝ Խաղաղականի ժամուն, որ սկսւում է՝ “Տէր Աստուած փրկութեան իմոյ, ՚ի առակ իսպրտացն”。 և նշանակում է որ Քրիստոս Տէրն մեր այս ժամուն թաղւեցաւ գերեղմանի մեջ։

Երեսերորդ՝ Հանգստեան ժամուն, որ է Եղանական ամբողջ։ և նշանակում է, որ Քրիստոս իւր Յարութիւնից յետոյ՝ այս ժամուն վերնատան մեջ մինչդեռ գուռը կողպած էր երեցաւ Առաքելոց։

Սուրբ Պատարագի խորհրդոց վերայ։

Սուրբ պատարագի չարչարանաց և մահուան յիշատակն է. բայց նորա մեջ նորա փրկագործ անօրէնութեան ամեն գործերը պարզ նկարագրում են մեզ։

Սուրբ պատարագի նորհրդոյ մեջ երեք կերպ ընթերց մունք կայ. առաջինը՝ Մաղթանի տահանացի, երկրորդ՝ Հքառորդ սարդարագի։ երրորդ՝ Երես տղրոց։ Դարձեալ, սուրբ պատարագի նորհրդոյ մեջ երկու կերպ արարողութիւն կայ. մեկը շաբանի, միւսը յայոնի։

Սուրբ եկեղեցին՝ երկնաւոր Ուագաւորի պալատն է. սուրբ սեղանն նորա աթոռը. և ժամարար քահանայն սարկաւագօք և գպրօք պիտի Աստուածոյ առաջ պատարագ մատուցանելու։ Ասոն որոյ առաջ խորանն է մտնում քահանայն սարկաւագի հետ միասին և այնուղի զգեստաւորւած դուրս են գալիս ատեան. բեմի առաջ քահանայն ձեռքերը

լուանում է տօելով, “Լուացից սրբութեամբ” կը այս է, որ օրինակ է ներքին մաքրութեան, ինչպէս մէկ էլ վերաբերումի մատների ծայրերն է լուանում, և այս էլ օրինակ է վերջն՝ մատների ծայրերն է լուանում, և այս էլ օրինակ է վաղարդութեան մերձեցողը՝ ներելի մեղքից էլ պիտի մաքրուի:

Յետոյ սարկաւագն սկսում է խնկարկել և քահանայն սկսում է ասել, “Մատից տառաջի սեղանոյն, գնում է բեմը և սեղանի առաջ կանգնում է: Մաղթանքը և քարոզը որ վեր ջացնում են, վարագուրը քաշում են: Յետոյ քահանայն սպաս է գնում, այսինքն նուէրը (ընդայն հաց եւ գինին) պատրաստում է, որ նշանակում է Բանին Վատուծոյ յղանալը յարգանտում է, որ նշանակում է Բանին Վատուծոյ յղանալը յարգանտում դի կուսին Մարիամու, սորա համար քահանայն այնտեղ ամէն աղօթքից յետոյ՝ ասում է. “Նուին սուրբ Եկեղեց ՚իշե՞ն աղօթքից յետոյ վարագուրի բացուիլը, քահանայի ցած գալը (երից): Յետ որոյ վարագուրի բացուիլը, քահանայի ցած գալը բերմից և խնկարկելով ժողովրդեան մէջ ըքիլը, և կրկին բեմը վերեր գնալը, և սեղանի առաջ կանգնելը՝ նշանակում է Քրիստոսի Վատուծոյ մերոյ երկնքից աշխարհը գալը՝ և մարգոց հետ ըքիլը, և ապա երկինք առ Նայր համբառնալը: Առուն հետ ըքիլը, և ապա երկինք առ Նայր համբառնալը: Արովն առ դպիրը երգում են, նշանակում է Արովնեից Վատուծոյը՝ որ դպիրը երգում են, նշանակում է Արովնեից երգը, որ աղաղակում էին առ Վատուծ, Առորը, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:

Մարգարեական և առաքելական գրեանց ընթերցմունքը նշանակում է, թէ Մարգարէից գուշակութիւնը և առաքելոց մարդութիւնը ի միասին՝ Քրիստոսի տնօրէնութիւնն են ծագաւանում: վասն որոյ սորանից յետոյ կարգում են Քրիստոսի, սուրբ տնօրէնութեան գիրքը, որ է սուրբ Վատուարանը: Յետոյ երկու ափներս մէկմէկու մօտ բերելով՝ Նաւատամք նշանակում, որ նշանակում է թէ ներքին հինգ զգայարանքներս ասում, որ նշանակում է թէ ներքին հինգ զգայարանքներս աշխարհական զբաղմունքից, և արտաքին զգայարանքներս մարմնական գործքերից յետ քաշելով, քրիստոնէական ներս մարմնական գործքերից յետ քաշելով,

սուրբ հաւատոյ դաւանութիւն ենք տալիս, ինչպէս որ սովորեցանք Մարգարէական, Վագելական և Վետարանական սուրբ գրքերից:

Որանից յետոյ ժամարարը հանում է սաղաւարտը և հողաթափը միայն. եթէ Եպիսկոպոս է՝ թագը, եմիփորունը և հողաթափը, պատճառ որ ժամարարը ոչ միայն օրինակ է Քրիստոսի, այլ և սարսափելի սուրբ խորհրդոյ սպասաւոր և կտարող նոյն խորհրդոյ:

Աերաբերումն նշանակում է սուրբ Յովակիայ Վատուածահօր և սուրբ կուսի Կաղարեթից գուրս դալը և Բեթղեհեմ գնալը:

Ժամարարի կիսով չափ սկիհի ծածկոց բանալը, և յետ քաշելը, նշանակում է Քրիստոսի կուսական ամենասուրբ ծնունդը: Աարգապետաց կամ քահանայից պաշտօնեայներով ատեան առաջ գալը ողջոյն առնելու, նշանակում է հովուաց մինչև Եեթղեհեմ գնալը ասելով՝ “Եկայ Երեւեցուք ՚ինչը յիշելուէհեմ, Եւ աւոցու՞ո՞ւ Նէ է բանս այս որ Եղելու: Բուշվառ ունող սարկաւագի ցած գալը և քահանային ողջոյն տալը՝ նշանակում է Հրեշտակի աւետիս տալը հովուաց՝ “Վհաւանի աւետարանէմ Յեղ ուստինուիլիս ՚ինք, զի Շնուր Յեղ այս ՚ինինչ: Այն ժամանակը սարկաւագը ժողովրդեան զգուշացնում է ասելով՝ ՚Գրուն, ՚Շորուն. . . և այլն: Իսկ թէ ինչի համար է այնքան զգուշութիւնը, այն պատճառ որ Քրիստոսի յայտնութեամբ այս երկիրս երկինք եղաւ, և մարդիկ Հրեշտակացան, վասն որոյ Հրեշտակաց պէս՝ Առուն, ՚Առուն, ՚Առուն, Տէ՛ր զօրութեանց, երգում են դպիրները: Այն ժամանակը ժամարարը կատարում է այն ահաւոր խորհուրդը, որ Քրիստոս վերնատան մէջ սահմանեց, և մինչև ՚ուգի՛ Վատուծոյ երգելը կատարում է: Եւ երբ Քրիստոսի յիշաւակը կատարում է՝ յետոյ յիշում են Վատուածածինը և

Այուրբերը, պատճառու որ յիշատակելով՝ Քրիստոսին և ամենայն սրբոց՝ և նեղութմ է քահանայն երկնաւոր ձօրից հաշտութիւն և ողորմութիւն ամենեցուն՝ կենդանեաց և ննջեցելոց։ Այօրա համար երբ յիշատակութիւնները վերջանում է, երգում են համարձակաձայն բարբառով Տէրունական աղօթքը և ձայն մէն։ Ապա սեղանի աջ կողմը դալով սարկաւագները վկայեալ Արբոց յիշատակում են ասելով՝ “Առատէլոց աղբոց, Առարժովէն”։ Յետոյ ձախ կողմը կրկին դառնալով՝ “Գոհունին էս դատավանութիւնն ասելով յիշատակում են կենդանիքը։

Այօրկաւագը բարձր ձայնով ասում է՝ Գոհունին մէ, այսինքն ուշիղ դիտաւորութեամբ մարիկ արէք, պատճառ որ ահա Քրիստոս մեր փրկութեան համար իւր ամէն տնօրէնութիւնը կատարեց, և երկնքը համբարձաւ, այս նշանակելու համար ժամարաբը դիսից վեր բարձրացնում է ուուրբ խարհուրդը ասելով՝ “Եւ ուստի աղբոց աղբոց, կամի ասել թէ այս սրբութիւն է, բայց ամենին չէ, այլ միայն սրբոց։ Ճամարաբի այս խօսքը լսելով դպիրները աղաղակում են” Այս սուրբ, միայն Տէր Յետ Յիսուս Քրիստոս, և մենք նորանով արժանի ենք լինում օրչնել ամենասուրբ Արքորդութիւնը. սորա համար էլ դպիրները երդում են” Ձայն սուրբ, Արքնէ սուրբ, ձայն սուրբ։

Ա երջը ժամարաբը մարմինը և արիւնը Քրիստոսի մկիհով առնում է ձեռքը և դառնալով գէպ ի ժողովուրդը ասում է՝ “Եւ սուրբ, Եւ սուրբ պատուահան հորմնոյ է յարդուն Տէտուն մէցոյ։ և այլն։

Յետոյ արժանաւորները հաղորդում են, և անպարհաստները սուրբ սեղանի փշրանքն (մասը, նշանը) են ձաշակում, որով մասնակից են լինում հաղորդողներուն և միաշակում են՝ Այս ի բարդութեան առ Տէր, և այլն։

Երբ ամէն Խորհրդական արարողութեանց վերջը՝ ժամարաբը կրկին սաղաւարտը գնում է դլիյին և հողամափները հագնում է և բեմից ցած է գալիս. բայց ցած գալուց առաջ ասում է “Ո՞ր օքնե՞ն զայնո՞ն”։ Ճամարաբի կրկին ցած գալը նշանակում է Քրիստոսի միտանդամ գալուստը, ’ի գատական։

Ա Երբ Խեղեցոյ, Տաճարէ, Անօններէ, և Օգեապներէ վեցայ կարմատածու ժամանելուն։

Բառա Ակեղեցի, Յաւնարէն էսվո՞ն նշանակում է Քրիստոսի հաւատացելոց ժողովը, կամ Քրիստոսի ժողովուրդը։

Եկեղեցին բաժանում է Օհնուորեալ և Յաղթական։ Օհնուորեալ Եկեղեցին նշանակում է հաւատացելոց ժողովը, որ դեռ ևս կենդանի լինելով իւր Քրիստոսի զինուար, հոգեոր զէնքով կուռում են իւրեանց հոգւոյ ժաշնամնյն հետ։

Յաղթականը նշանակում է ննջեցելոց սրբոց ժողովը, որ բարի պատերազմը կատարելուց յետոյ՝ յաղթեցին հոգւոյ թշնամւոյն և յաւիտենական փառաց յուամիլ փուաւեցան այս աշխարհքից։

Տաճարն է աղօթատեղի (աղօթատրւն, տուն Աստուծոյ) կամ շինուածք՝ օրչնած և սուրբ մեռնուով օծած Եպիսկոպոսից, տէրունական պատկերներով և ուրիշ մաքուր զարդերով զարդարած, ուր կատարում են սուրբ եկեղեցւոյ խորհուրդները և միւս սրբազնագործութիւնները, և ուր Քրիստոնեայք հրապարակաւ աղօթք են մատուցանում առ Աստուած։

Դառնուն, Բառա Եւ ուղիղ անյասուն նշանակութեան է Եր-

Էլքն էս նշանակում է ուշըն իսմ շնորհածը (Տաճար,) ու հատակում էն Քըլուստնեայք իշլանց Աստուածապաշտութեան չափակը:

Վաղըն աղջիապեղին իսմ Տաճարն էր այն մեժ է- շորդապ վերաբռնելը, ուր Քըլուստն ինձն ի- աշախերուոց հետ շնիրեալ իստորից: Այս օրինակա հետարշություն- եցան աղջիապեղին Քըլուստնեայք, որ աղջապներում որ շորուում էին աստածեալ:

Խնդիր ինչ այստուան մեջ չափա- րու ժամանակը օւարէս աստածեալը Երեխիս աղջապներու աղջիապեղին համապատասխան շնիրեալ շնիրեալ շնիրեալ աղջիապեղին: Արյունի հարթուղին աստածեալը Ութլուու է- Ա անոնդ մեջ չափա- րունի Անձեացեաց էրիրումը շնիրեալ աղջարը Աստուածապատճեայ անուամբ:

Իսէ չորրորդ տարր սինդի՛ 303 լու- ին մեջ Տրտառ ժամանակը սուրբն Գրիգոր լուսաւութեալ, երեր ընդ- հանրութեա ապրութեա Քըլուստնեութեանը՝ շնիրեալ իշլանց պահար, որ է սուրբ Խըմիտինը. է- յետու ամէն աշը շնիրեալ ուրիշ շնիրեալ աղջիապատճեալը նուրան:

Խըմիտինց աստած սուրբ Գրիգոր լուսաւութեալ, երեր Կեսարինց Յեւնատրատ յետ էր Գուլի այստուան, առջին ան- գամ Տարօնումը շնիրեալ կան է- յուրի աղջիապեղին:

Տաճարը բաժանւում է երեք մասը. 1) Գյաւիթ. 2) յատկապէս Տաճար կամ Վտեան. 3) Բեմ:

Գյաւիթը տաճարի առաջին մասն է, ուր հին ժամանա- կը հաւաքւում էին նորընծայք, ապաշխարողները և պատ- րաստածները մկրտւելու համար: Այս մասը տաճարի կոչ- ում էր ևս Տրապիզ կամ Վեղան, այն պատճառաւ որ առա- ջին դարու Քըլուստնեայք իւրեանց Աստուածապաշտութիւնը կատարելուց յետոյ՝ հասարակաց սեղան էին գնում և կե-

րակրւում էին այն սեղանից, որ կոչում էր Վգապ (սէր):

Յատկապէս տաճար կամ ատեան կոչում է երկրորդ մասը եկեղեցւոյ, որ է բեմի և գաւթի մէջ տեղը, ուր ինչ- պէս հին ժամանակը, նմանապէս և այժմ հաւատացեալը կա- տարում են իւրեանց Աստուածապաշտութիւնը:

Ինձն է տաճարի երերորդ մասը՝ երեք կամ աւելի աս- տիճաններով ատենից բարձր, և վարագուրով բաժնած, ուր վեր են ելնում միայն աստիճանաւոր եկեղեցականք: Ինձի աջ ու ձախ կողմերից կան խորաններ կամ աւանդատունք, ուր պահուում են տաճարի սպասները, անօթները և հան- գերձները:

Ինձի վերայ մէջ տեղը շինած է սեղան, հաստատած մէկ քարէ սինի վերայ, որոյ մէջ Խպիսկոպոսը դնում է քար (վէմ քար) վրէն խաչեր փորագրած, մեռնով օծած, ծածկո- ցով և գոգնոցով զարդարած, որոյ վերայ կատարում է Յի- սուսի Քըլուստուի կենարար մարմիոյ և արեան խորհուրդը:

Անդանի վերայ գրած են Վւետարանը, կենարար Խաչը և Քըլուստուի խաչելութեան կամ ուրիշ Տէրունական պատ- կերներ: Անդանի յեւնէն հիւսիսոյ կողմը որմի (պատի) մէջ շինած է Ընծայարանը ուր պահում են Պամատուփիը:

Եւելուրան բառը նշանակում է այն գիրքը, որոյ մէջ պարունակւում են ուրախարար համբաւներ, այսինքն Քըլու- ստուի տնօրէնութեան ուրախարար պատմութիւնները, աւետա- լից խօսքերը և վարդապետութիւնը՝ տւած մեղ մեր հոգւոյ փրկութեան և յաւիտենական կենաց համար:

Խառն առաջ պատուհասի քառամեկ փայտն էր. այն պատուհասի դործիքը մարդկային աղբի փրկութեան միջոց դարձաւ, պատճառ որ՝ Յիսուս Քըլուստոս իւր անձն նորա վերայ պատարագ բերելով՝ աղատեց մարդկային աղգը մեղ- քեց, և այս սուրբ նշանը պարծանք թողաւ Քըլուստոնէից

Համար: Խաչը պէտք է բազմած լինի սեղանի վերայ, այն պատճառաւ որ այնտեղ է կատարւում նոյն իսկ խարհրդական պատարագը:

Մասնատումն է փոքրիկ տուփ (*դութի*) որպէս մէջ առաջուց սրբագործած Յիսուսի Քրիստոսի մարմար և արեան մասն են պահում՝ հիւանդաց և բանտարկելոց հաղորդելու համար:

Ա էմն է մարմարէ քառակուսի քար: Անը ։ այսատանեայց Եկեղեցւոյ մէջ առանց վէմբարի կարելի չէ կատարել սուրբ պատարագի խորհուրդը: Ընծայարանն է տեղի, ուր պատրաստում է նուէրը (*հացը և գինին*) անարիւն պատարագ մատուցանելու համար:

Օանօթ: Առողի անօլունելու, աղասինելու Ե= Պէտառնելու ժաման Են Եկեղեցւոյ Տէջ ոմանչ տառաշելոց ժամանակը. Ե= ոմանչ առց յալորդաց Ե= Տիւ տառաշնորդաց ժամանակը, Եկեղեցեաց բաշեղարդունեան Ե= պայտառունելուն համար:

Անօլունելը:

Մաղղմայն է արծաթեայ ոսկեզօծ փոքրիկ պնակ (*թեփչի*):

Ակիչը նմանապէս արծաթեայ ոսկեզօծ բաժակ է, և երկուսն էլ սահմանած են առաքելաց ժամանակը, Մաղղմայն՝ Նշանագը (*հացը*) վրէն գնելու համար. Ակիչը (*բաժակ*) գինին մէջը ածելու համար:

Քօղը բարակ ծածկոց է, որով ծածկում են նուէրը (*հացը և գինին*):

Քշցներն են արծաթեայ բոլորակ ճօճանակներ, որ երկու երեսից էլ ունին ոսկէ կամ արծաթէ ոսկեզօծ Արովեէից և Քրովեէից պատկերներ, որ սարկաւագները պատարագի ժամանակը ձեռքին ունին և շարժում են: Քշցները օրինակ

են վեցթևեան Արովեէից և Քրովեէից, որ նոցանով աչքներիս առաջ ունենանք այն աներկեցյթ ոգուց ներկայ լինելը:

Իուրվառը խնկարկութեան անօթ (աման) է, որով խունկ են ծխում Տէրունական և սրբոց պատկերաց և ժողովրդոց առաջ:

Մոմեր վառելը սահմանեցաւ հին ժամանակւանից, պատճառ որ Քրիստոնեայք գիշերները մօտ էին լինում միասին աղօթք անելու: Իայց մոմեր վառելը եկեղեցւոյ մէջ մնաց ցերեկով ևս, չետեւելով հին օրինաց, պատճառ որ Խորայելացւոց մէջ հին կտակարանի առաջ միշտ վառած էր ջահը, այս մաքով թէ՛ Աստուծոյ օրէնքները լցու են, և լցու են տալիս մարդոյ Ճամբին: Իաց 'ի սրանից իւղի և մոմեղինաց վառելը տիպ և նշանակ է հոգւոյ, որ վառուած է սիրով առ Աստուծած:

Եկեղեցական հանդերձներ էամ զգացնելը:

Եկեղեցւոյ մէջ սուրբ պատարագի ժամանակը գործ դրում հանդերձները կամ զգեստները սոքա են, շապիկ, ուրար, փորուրար, բազպան, գօտի, կոնքեռն, վակաս, շուրջառ, սաղաւարտ, թագ, եմիփորոն և գաւազան: Այս զգեստներից սարկաւագը միայն կարող է զգենուլ՝ շապիկ և ուրար, քահանայն՝ շապիկ, փորուրար, գօտի, բազպան, վակաս, շուրջառ և սաղաւարտ: Եղիփակոպոսն բաց 'ի սոցանից գործ է դնում եմիփորոն, կոնքեռն, թագ և գաւազան:

Սարկաւագի ուրարը առաջ մէկ երկար կտաւէ զարդ էր, որ հին ժամանակը սարկաւագները գձում էին ուսի վերայ՝ նորանով սրբելու հաջորդաւողների շըթունքը:

Օանօթ: Առողի Եկեղեցւոյ վարդապետները ուրարը նախանդցնեամ Են հրեշտակների լեռերին, պատճառ որ սարդաւագի

իսպան յոյց է տալեն հրեշտակին պաշտօնը: Այս եւս նշանակում
է Քրիստոնի օրինաց լուծը: Ասրդաւածը ով միայն չափ ոսով
է գյում, յոյց է տալեն ունենալուն չունենալուն բոլորու-
թիւն Քրիստոնի օրինաց լուծը բառանալուն: Եւս ինստանցիանեցը՝
ով չափ բառուն վերայ է հրում ուրարը՝ նշանակում է սրբին լիւ
նա ինքն ունենան անհար ճանաչելով Աստուածոյ օրինաց լուծը բառ-
նալուն, ինչ իտրոց ճօնինու Աստուածոյ պարունակածոց գործ-
տելին:

Փորուրարն է քահանայի ուրարը, որ ձգում է պարա-
նոցի վերայ կախ, և նշանակում է Քրիստոսի աւետարանի
քաղցր լուծը, որ կրում է իւր լանջերով:

Գրամին նշանակում է պատրաստութիւնը, զօրութիւնը
և արիութիւնը՝ քահանայական պաշտօնը կասարելու:

Կոնքեռն է խաչաձև զարդ գօտկից կախ արած ազդեր
վերայ, և ունի հոգեոր զէնքի (սրոյ՝ այսինքն Աստուածոյ բա-
նին) նշանակութիւն, որով քահանայապետն պիտի զինորուի
անհաւատից և հերձուածողաց դէմ, և տրում է միայն արք
եպիսկոպոսաց: Կոնքեռն զարձեալ նշանակում է Աւետարա-
նական Մահաղը:

Շուրջառը նշանակում է անկար քղամիգը, որ հագած
ունէր Քրիստոս:

Ա ակասը ուսերքի զարդ է 'ի հին օրինաց առած, որ
քահանայապետը հագնում էր՝ Եփուդ կամ Ա ակաս տասն
երկու ակներով զարդարած և փորագրած նոցա վերայ Խորա-
յելացւոց տասներկու ցեղի անուանքը:

Աղաւարտ (խոյը համ եղիսնորոսական լուս) որ հին օրի-
նաց քահանայապետը գնում էր գլուխ: Աստ նոր օրինաց
նշանակում է վշեայ պսակը և վարշամակը, որով փաթթած
էր Փրկչի վերաւրուած գլուխ:

Հայաստանեայց Երկեղեցոյ Տօնախմբութիւնք:

Տօնախմբութիւնը են սուրբ հանդէսներ և հոգեոր ու-
րախութիւնք, որ հաւատացելոց ժողովը եկեղեցւոյ մէջ հա-
մախմբած հրապարակաւ կատարում է 'ի փառ Աստուածոյ և
'ի պատիւ նորա սրբոց. ինչպէս սահմանել են Առաքելքը և
Հայրապետք:

Ամենայն քրիստոնեայք այսպիսի տէրունական տօները
համարեա թէ միակերպ են կատարում, պատճառ որ սովորել
են Քրիստոսի առաքեալներից և նոցա յաջորդաց—Հայրա-
պետներից. բայց այս տօները իւրաքանչիւր քրիստոնէից մէջ
կատարում են զանազան արարողութեամբ և ծէսերով:

Տօնախմբութիւնները բաժանեում են երկու. Առաքելա-
գիր և Հայրապետագիր:

Առաքելագիր տօնախմբութիւններն են Աստուածայտ-
նութեան, Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան և
Քրիստոսի միւս տնօրէնութեանց հրաշափառ տօները, որ
Առաքելքը սահմանեցին և սովորեցին Եկեղեցւոյ, որ ամէն
տարի Քրիստոնեայք հռչակելով փառաւորեն զԱստուած:

Հայրապետագիր տօներն են Տեառնընդառաջի կամ
Քրիստոսի քառասնօրեայ գալստեան 'ի տաճարն, Ա արդա-
վառի կամ Քրիստոսի Պայծառակերպութեան, Աստուածած-
նայ Ա երափիման, Գիւտ Խաչի, Երկման Խաչի, վերաց-
ման Խաչի, Ա արագայ Խաչի, և ուրիշ տօներ Աստուածած-
նայ, Յովհաննու Ոկրաչի, Առաքելց, Ուարտիրոսաց և այլ
ամենայն սրբոց:

Տէրունական կոչում են այն տօնախմբութիւնները, ո-
րոնք կվերաբերին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր
օրինակ. Աւետման, Աստուածայտնութեան, Ոկրտութեան,
քառասնօրեայ Ընծայման 'ի Տաճարն, նորա Գալստեան

Երուսաղէմ ծաղկալարդին, և ամբարձման և այլ տնօրինական տօները:

Տաղաւարները Տէրունական տօնախմբութիւններն են, և համարում են հինգ, որոնք մեր Հայաստանեաց եկեղեցւոյ մէջ կարգած են երեւլի տէրունական տօներին. այսինքն՝ Օննդեան, Օատկի, Արդավառի, Աերափոխման Աստուածածնայ և Խաչվերացին. Բայց Օննդեանը և Օատկին մեղանումը աւելի հանդէսով են տօնւում, պատճառ որ փրկագործութեան և քաւութեան տօներ են, այս պատճառաւ էլ այն տօների նախընթաց օրերը Ճրագալոյց են անում, և մեր եկեղեցւոյ վարդապետները Օննդեան և Յարութեան Ճրագալուց երեկոյին կարգել են պատարագ մասուցանել:

Տաղաւար ասում են այն տօները, որն որ հրէայք տարին միանգամ մէծ հանդէսով կատարում էին, որ կոչում էր Տաղաւարահարաց տօն. և թշբին (Հոկտեմբ) ամսին գնում էին Երուսաղէմ, ուր ժողովում էին հրապարակներումը, պարտէզներումը և կտորների վերայ, և տաղաւարներ էին շնուռմ կամ մանր շարժական խուցեր էին շնուռմ և եղեղներով (զամիշով) և ծառի ճիւղերով զարդարում էին և բնակւում նոցա մէջ եօթն օր, իւրեանց քառամամեայ պանդխութեան յիշատակի համար անապատումը. և եօթներորդ օրը մէծ հանդէսով ճիւղները ձեռին բռնած՝ եօթն անգամ զոհի բոլորը պտուտէին գալիս, և այնպէս կատարում էին իւրեանց տղատութեան յիշատակը: Եօթ օրէնքումը խափանուեցան և փոխանակ նոցա կարգեցան հինգ երեւլի տէրունական տօները. պահելով առաջին անունը Տաղաւար կամ Տաղաւարահարաց պէս: Տաղաւար նշանակում է վրան (շատրված):

Առաջին Տաղաւար է Յիսուսի Քրիստոսի Օննդեան տօնը, որ մեր փրկութեան համար մարդկային բնութիւն առաւ, Աստուածը մարդացաւ, որ մարդկանց մեղքերը բառնայ, համ-

բերեց չարչարանաց և մահուան մեղ համար, որ մեղ յաւիտեական երանութեանը արժանացնի, վասնորդյ և կատարւում է մեղանում Օննդեան, Աստուածայայտնութեան և Մկրտութեան տօնը Յունվարի 6-ին:

Տեառնընդառաջն է Քրիստոսի քառասնօրեայ տաճար գալու տօնախմբութիւնը, ուր Ախմեովն ծերունին իւր գիրկն առաւ զիրկիչն և օրհնեց զԱստուած: Այս տօնը մեր եկեղեցին կատարում է Փետրուարի 14-ին:

Աւետումն է Աստուածոյ բանին անձառելի մարդեղութեան տօնախմբութիւնը, որ Կարբիէլ հրեշտակապետը աւետիս տօնւաւ: Մարիամ սուրբ կուսին, թէ Իանն Աստուած Հոգւով սրբով կյլանայ նորա արգանդումը, և կծնւի Փըրկիէ աշխարհի: Այս տօնը մեր Հայաստանեաց եկեղեցին կատարում է Ապրիլի 7-ին:

Օադկազարդն է Յիսուսի Քրիստոսի Երուսաղէմ մըսնելու տօնախմբութիւնը:

Քառասնորդաց վերջին եօթնեակը (շաբաթ) կոչում է աւագ կամ չարչարանաց շաբաթ, պատճառն որ Երկուշաբթի օրը՝ մեր եկեղեցին Արարշութեան և Աղամայ Գրախանից դուրս գալու յիշատակն է կատարում: Երեքշաբթի՝ համաշխարհական ջրհեղեղի և տասն կուսանաց: Չորեքշաբթի՝ Յիսուսի Քրիստոսի մատնութեանը: Հինգշաբթի՝ աշակերտաց ոտները լուաց Քրիստոս, և նոյն երեկոյին զատկուկան գառը կերաւ իւր աշակերտաց հետ, և հաստատեց սուրբ պատարագի նորհուրդը. և նոյն զիշերը չարչարւեցաւ: Աւագ ուրբաթ օրը խաչեցաւ և մեռաւ, և նոյն երեկոյին թաղւեցաւ: Աւագ շաբաթ օրը մնաց գերեզմանի մէջ մինչև կէս զիշերը կերակէի:

Երկրորդ Տաղաւարն է Օատկի կամ Յիսուսի Քրիս-

տոսի Յարութեան տօնը, որ երրորդ օրը թաղման յետոյ,
յարութիւն առու, և առաջին անգամ աւետիս տուաւ հրեշ-
տակը իւղաբեր կանանց, և յետոյ երկեցաւ նոցա և իւր մօր
Մարիամին և իւր աշակերտաց շատ անգամ քառասուն օրուան
մէջ:

Համբարձումն է Քրիստոսի քառասներորդ օրը երկինք
համբառնալու տօնախմբութիւնը, որ տարաւ իւր աշակերտաց
Զիթենեաց լեառը Շեթանիայում, ձեռքը դրեց նոցա վերայ,
օրհնեց, և հրամայեց սպասել վերնատանը Հոգոյն որրոյ
գալստեանը, և ինքն նոցա առաջ սկսաւ բարձրանալ երկինքը,
և ամպը ծածկեց նորան նոցա տեսութիւնից, յետոյ աշակերտ-
սպասում էին Քրիստոսի խոստմանը կատարւելուն:

Օտարութիւն. Հոգութիւնն աւորոյ տառաջին չեղաբեր ո՞յ մեր
Եթենցին չուզում է Եթենուր Օտարութիւնը՝ Հոգութիւնն չըրրուր
մէջ լէ սուրբ Լուսուրուք աղահաղոս հայ մեր առաջին
ապահովեցից էն, և Հոգութիւնն աղահաղութիւնն պատճառութիւնը
մէջ նույն էն երեսուր էն մեր Հայութիւնը այս իւրաքանչիւրը, ոյն իւրաքանչիւրը
աղահաղութիւնը է իւրաքանչիւրը, ոյն պատճառութիւնը նույն է իւրաքանչիւրը:
“Մէջ հարաց այս նորհուր տառութունն էն առ մեր հասեալ, ուր
է աղոստ իմայ ու աղոստ իմայ էն մեր հասեալ, ուր

Հոգեգալուսուն է Հոգույն սրբոյ իջման տօնախմբու-
թիւնը, որ կոչում է նաև Պիտութիւնուն, այսինքն յիսներորդ
օր, պատճառն որ զատկից եօթը շարաթ յետոյ հրէպար տօնում
էին օրինաց յիշատակը, որ առան Մինայ լեռոն վերայ, որ
Հոգեգալուսուն օրինակ էր: Հոգույն սրբոյ գալուսուր կա-
տարեցաւ յիսներորդ օրը զատկից յետոյ, երբոր առաքեակը
և աշակերտք միասին աղօթք էին անում Ա երնատան մէջ:

Երեք ժամուն սաստիկ քամու ձայն ելաւ, և երեւցան ամեն-
քի վերայ հրեղէն լեզուք, որոնք շնորհաց նշան էին, և
որով առաքեալք սկսան խօսիլ զանազան լեզու և մարգարեա-
նալ. նաև նոյն օրը շատերին դարձրին դէպ ի քրիստոնէա-
կան հաւատը:

Երրորդ Տաղաւարն է Ա արդալառի կամ Քրիստոսի
Պայծառակերպութեան տօնը, որ մեր եկեղեցին մեծ հանդէ-
սով է կատարում, ինչպէս սուրբ Առուաւորիչը սահմանա-
դրել է:

Դրանով, Կատաղուղութեան ժամանակը մէջ առն էր հաստ-
ուում Հայութանի մէջ ՚ի պատիւ Անահիտ հոր, իոն Գրեթու-
ր լուսուրուիչը այս տօնը վերցրուց էւ հարթեց Քրիստոսի Պայշտ-
առակերպութեան տօնը, էւ որովհետեւ վաստակ սակաւորումէնի
աղահաղութիւնը է իւրաքանչիւրը, ոյն պատճառութիւնը նույն է իւր-
աքանչիւրը եր Ա արդարաւորն, հասն որոյ այն տօնախմբութեանն է իւրէ-
տուր Ա արդարաւորն:

Պայծառակերպութեան տօն կոչում է այն տօնը, որ
Քրիստոս կամեցաւ իւր չարչարանքից առաջ ցոյց տալ առա-
քելց իւր Աստուածութեան փառքը. վասն որոյ առաւ Պետ-
րոսին, Յակոբոսին և Յովհաննէսին իւր հետ Ծաբօր Լե-
րուսին, պատճառութիւնն է վայրի եղան ձիւնի պէս, և երեւցան
գակի պէս, շրերը սպիտակ եղան ձիւնի պէս, և որդի իմ սիրելի գորան լաեցէք:

Չորրորդ Տաղաւարն է սուրբ Վատուածածնայ Ա երա-
գուխանն տօնախմբութիւնը, որ միշտ տօնում ենք Օգոստոս
ամսուն Ակրակէ օր, և այս տօնախմբութիւնը մեր եկեղե-
ցին կատարում է ինն օր:

Օտարութիւն. Ա առհասպանի ամենայն Եթենցին Քրիստոնէաց

Աստվածաշնչայ չորս պոհանիմութիւն՝ էն հապարտամ, այս է՝ Յղու-
թեան Աստվածաշնչայ Ընդույց, ո՞ս ածում էն մեշտ Գլուխում-
բերե 9 էն. Կորո Շնորհանը՝ 8 էն Աւազութեւի. Երես արաց
շնչայման՝ պահանը՝ 21 էն Կուշեցեւի. Եւ Աւազութեւին՝
ո՞ր շարժական առն վնաւը համար չափանիւնում՝ Օգոստոս ամսի
Ենթե 13 էն—14 15—էւ 16. մեշտ ինքանին օք:

Նիստերորդ Տաղաւարն է սուրբ Խաչի տօնախմբու-
թիւնը, որ մեր եկեղեցին տարին չորս անգամ է տօնում,
այսինքն է Գիւտ Խաչին, Երեման Խաչի, Աւացման և
Արագայ Խաչի. Գիւտ Խաչի տօնն է, որ Կոստանդիանոս
թագաւորի մայրը Նեղինէ թագուհին գնացել էր Երուսա-
լէմ 327 թուին ուխտ և երկրպագութիւն տնօրինական տեղեաց,
ուր մեծ ծոխով գտաւ և բաց անել տուաւ սուրբ Խաչը որ
հրէայք թագ էին կացրել և բողմեցրուց իւր շինած եկե-
ղեցւոյ մէջ. վասն որոյ ՚ի պատիւ և ի փառաբանութիւն
սուրբ Խաչի եկեղեցին կարգեց Գիւտ Խաչի տօնախմբու-
թիւնը:

Երեման Խաչի տօնախմբութիւնն է այն, որ իւր 362
թուին, ինչպէս պատումէ Կիւրեղ Երուսաղեմացին, երկրն-
քումը երեցաւ Խաչաձեւ լցո, և այս տեսելիքի վերայ զուրս
եկան բոլոր քրիստոնեայք և երկրպագութիւն տուին և
փառաւորեցին. Քրիստոսի սուրբ Խաչը, այս պատճառաւ
սահմանուեցաւ Երեման Խաչի տօննը:

Աւացման Խաչի տօնախմբութիւնն է այն, որ Պար-
սից թագաւորը գերի էր տարել սուրբ Խաչը, որ յետոյ Խո-
ռում նոցա թագաւորը մեծ պատով յետ ուղարկեց Յունաց
կայսեր Ներակին, և նա 629 թւին Կոստանդնուպոլից գնաց
Երուսաղէմ, և այնտեղ ինքն իւր ուսի վերայ դրած սուրբ
Խաչը բաղմեցրուց իւր առաջւայ տեղը, այս պատճառաւ սահ-
մանուեցաւ տօնը վերացման Խաչի Աեպ, ամսուն՝ որ կիւրակէ:

Արագայ Խաչի տօնախմբութիւնն է տյն, որ յայտն-
ւեցաւ Արագ լերան (սարի) վերայ, ուր Նորիսիմեան կու-
սանք բերել էին Խաչափայտի մասն, և նոցա վախճանելուց
յետոյ մնացել էր այնտեղ յետոյ Ուողիկ Ճգնաւորի Ճեռքով
յայտնեցաւ Հրաշըռով և տեսիլքով, և Երեսէս կաթուղիկոսի
ժամանակը 653 թւին՝ կարգւեցաւ տօն յայտնութեան Խաչի
Արագ լերան վերայ:

Եւակասիք բառը նշանակում է տօն և հանդէս եկե-
ղեցւոյ շինութեան և ուրիշ մեծ անցքի համար: Ինչպէս Նորէ-
այք նաւակատիք էին կատարում իւրեանց տաճարի շինու-
թեան պատճառաւ, այսպէս էլ մեր նախնիքը քանի մի մեծ
տօներու նախընթաց օրերումը սահմանեցին տօն եկեղեցւոյ,
և կարգեցին երեք նաւակատիք, ինչպէս Արդավառի, Ա-
րագիտման և Խաչվերացի նախընթաց օրերին, և հանդիսա-
ւոր տօնախմբութեան և ուրախութեան պատճառաւ՝ ուտում
ենք այն օրերին միայն ձու, իւղ, կաթն և ձկնեղէն:

Արքունիւթ:

Յանուն Նոր և Որդւոյ և Նորւցն սրբոյ:

Տէղուանական Արքունիւթ:

Նոր մեր՝ որ յերկինս, սուրբ Եղիցի անուն քո, եկես-
ցէ արքայութիւն քո. Եղիցին կամք քո որպէս յերկինս և
յերկրե: Օհաց մեր հանապաղորդ տուր մեղ այսօր: Եւ
թող մեղ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պար-
տապանաց: Եւ մի տանիք զմեղ ՚ի փորձութիւն. այլ փըր-
կեա զմեղ ՚ի չարէ: Օհ քո է արքայութիւն և զօրութիւն
և փառք յաւիտեանս, ամէն:

Առաւատակեան Աղջիկ

Օպաւաւուու աղօթս և զբանաւոր պաշտօնս ընկալ ամենակալ, ամենամեծդ Աստուած՝ ի քո անոպական և յերկնային Խորանսդ: Օպակեա առ մեղ զարդարութեան և զիմաստութեան Աղյու քո, արա զմեղ որդիս լուսոյ և որդիս տունընչեան, որպէս զի՞ ի գալ աւուրս Երկիւղածութեամբ վարեսցուք ըդկեան մեր, և առանց գայթակղութեան կատարեսցուք: Օք դու ես օգնական և փրկիչ մեր և քեղ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս:

Դոհանամք զբէն Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեղ՝ ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քոյ: Օպաթո զմիտս մեր արդարութեամբ առ քեղ Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զիրկութիւն քո, եկեսցէ և ընակեսցի առ մեղ Աստուածութիւն քո, և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի՝ ի վերայ պաշտօնէից քոց: Եւ զմեղ զծանայքս քո՝ արժանի՛ արա ՚ի տուէ և ՚ի գիշերի և յամենայն ժամու միշտ Խորհիլ՝ ի սէր պատուիրանաց քոց: Եւ մեք գոհանալով փառաւորել զայյր և զիրդի և զսուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ նսաշեցար վասն մեր, ողորմեա մեղ (Երեց):

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Ապրիամ՝ Ապար՝ Քրիստոսի, մատո զաղաշանս մեր՝ Որդոյ քո և Աստուծոյ մերոյ: Փրկել զմեղ՝ ի փորձութեանէ և յամենայն վտանգից մերոց:

Ի պահի Յարութեան:

Քրիստոս յարեաւ՝ ի մեռելոց մահուամբ զմահ կոյս:

Խեաց և յարութեամբ իւրով մեղ զկեանս պարզեաց. Նմա փառք յաւիտեանս, ամէն:

Առ Տէրամայր սուբէ իրան:

Ենկանիմք առաջի քո, Աստուածածին, և աղաչեմք զանարատ զԱյյոդ. բարեխօսեա՛ վասն անձանց մերոց և աղաչեա՛ զմիածին Որդիդ, Փրկել զմեղ՝ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Աղջիկ ժաշու:

Աչք ամենեցուն՝ ի քեղ յուսան, և դու տաս նոցա կերակուր՝ ի ժամու: Բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեան քաղցրութեամբ կամօք քովիք.

Ռաշակեսցուք խաղաղութեամբ, օրհնեալ է Տէր՝ ի պարզես իւր, ամէն.

Օքնի ժաշու:

Տէր Յիսուս, լցաք՝ ի բարութեանց քոց: Տացուք գոհանութիւն Տեան Աստուծոյ մերոյ՝ Հոգ և Որդոյ և Հոգացոյն սրբոյ: Զմիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արաւցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեղ կերակրեաց: Կմա փառք յաւիտեանս, ամէն

Աղջիկ յառաջ ժան Հոգանութեան:

Տէր Աստուած մեր, առաքեա՛ ի մեղ զշնորհս Հոգւոյդ սրբոյ պարզեել մեղ միտս և կազգուրել զզօրութիւն հոգւոց մերոց, որպէս զի ընդունելով զաւանդեալ մեղ ուսմունն՝ զարգացուք քեղ Ատեղծողիդ մերու ՚ի փառս, ՚ի միտթարութիւն ծնողաց մերոց և յօդուա Եկեղեցւոյ և Հայրենեաց:

Օ՞՞ն Շատութեան

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, զի արժանի
արարեր զմեղ շնորհաց քոց՝ ընդունելութեան ուսմանս, օրհ-
նեա՛ Տէր, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեղ
՚ի գիտութիւն բարութեան, և տուր մեղ կարողութիւն յա-
ռաջաղեց զարդանալ յուսումն իմաստութեան և գիտութեան:

Հանդպատեան աղջկա:

Տէր Աստուած մեր, դու պահեա՛ զմեղ խաղաղութեամբ
՚ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի: Ընդ սուրբ
երկիւղ քո բեկուեալ պահեա զմիտս և զնորհուրդս մեր: Որ-
պէս զի յամենայն ժամ քե պահպանեալ լիցուք յորոգայթեց
թշնամոյն: Եւ քեզ հանցաք զօրհնութիւն և զփառս Հօր
և Որդոյ և Հոգուոյդ սրբոյ: Այժմ և միշտ և:

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա՛ զանձինս մեր,
Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեղ անխոռվս ՚ի
տուէ և ՚ի գիշերի, յարթնութեան և ՚ի հանգստեան մերում:
զի դու ես արարիչ լուսոյ, և հաստիչ գիշերի: Եւ այժմ
աղաւմք զքեղ Տէր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնոր-
հեա խաղաղութեամբ անցուցանել և հասանել ՚ի պաշտօն
առաւտու: յերկրպագութիւն և ՚ի փառարանութիւն ամենա-
սուրբ Երրորդութեանդ, այժմ և

Երժ խաչ

Խաչ քո Քրիստոս երկիրպագանեմք, և զսուրբ Խա-
չելութիւնդ քո մեծացուցանեմք, և զսուրբ զՅարութիւնդ
քո փառաւորեմք: Եկայք հաւատացեալք, երկիրպագեցուք

Քրիստոսի Աստուածոյ մերոյ. վասն զի եկն ՚ի ձեռն Խաչին
իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի: Սուրբ Աստուած, սուրբ
եղօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողոր-
մեա՛ մեզ:

Փառք սուրբ Խաչի, ալելուիա, սուրբ Վասնու-
թեանդ, ալելուիա. Զարչարանացդ, ալելուիա. Խաչելու-
թեանդ, ալելուիա. սրբոյ թաղմանդ, ալելուիա. սուրբ Յա-
թեանդ, ալելուիա: Փառք և երկրպագութիւն Հօր և
ըռութեանդ, ալելուիա: Փառք և Հայութիւն յաւի-
սենից, ամեն:







337



